


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը
մատուցված ծառայությունների ծավալը)**

	2002թ. հունվար-հուլիս		%-ով ընդհանուրի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	%-ով 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ	2002թ. հունվար – հուլիս	2001թ. հունվար- հուլիս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդհանենը այդ թվում՝ մանրածախ ապրանքաշրջանառություն բնակչությանը մատուցված ծառայություններ	385898.1	113.1	100.0	100.0
	287171.7	114.5	74.4	73.4
	98726.4	109.8	25.6	26.6

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը
մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները**

(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հուլիսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համարելի գներով՝ 13.1%) և դրանում 1.0 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համանանորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2002թ. հուլիսին սպառողական շուկայի ծավալը հունիսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 109.9 %:

Մանրածախ առևտուր


2002թ. հունվար-հուլիսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 287.2 մլրդ.դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համարելի գներով, կազմել է 114.5% (2002թ.հուլիսին հունիսի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համարելի գներով, կազմել է 113.9%):

ՀՅ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-հուլիսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռ %-ով ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը՝ այդ թվում՝	287171.7	100.0
Խանութներ	147788.7	51.5
հանրային սննդի կազմակերպություններ	3075.9	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	82548.1	28.7
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	12686.8	4.4
Կրապակներ	41072.2	14.3

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ծեավորման աղբյուրների, 2002թ. հունվար-հուլիսին

(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հուլիսին ՀՅ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրապակներում իրականացվող առևտուր՝ 94.5% (271409.0 մլն. դրամ), իսկ 5.5% (15762.7 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի կազմակերպություններում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտուրին:

ՀՅ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2002թ. հունվար-հուլիսին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 82548.1 մլն. դրամ:


ՀՅ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՅ մարզերի և ք. Երևանի 2002թ. հունվար-հուլիսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Արագածոտն	204.8	-	100.0
Արարատ	427.7	16.2	83.8
Արմավիր	699.3	39.6	60.4
Գեղարքունիք	914.6	20.0	80.0
Լոռի	1939.2	53.8	46.2
Կոտայք	1009.5	27.1	72.9
Շիրակ	628.1	0.6	99.4
Սյունիք	363.7	1.5	98.5
Վայոց ձոր	-	-	-
Տավուշ	994.4	64.9	35.1
ք. Երևան	75366.8	13.5	86.5
Ընդամենը ՀՅ	82548.1	14.4	85.6

Յարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2002թ. հունվար-հուլիսին, կազմել է 85.6%, իսկ պարենային ապրանքներինը՝ 14.4%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)

(% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հուլիսին 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության անբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 3.8 տոկոսային կետով:

2002թ. օգոստոսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններուն կազմել են 25954.0 մլն. դրամ, իսկ ապահովածությունը՝ 40 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-հուլիսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.4% կամ 12686.8¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:


1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2002թ. հունվար-հուլիսին հանրապետությունում ըստ ծառայությունների մատուցող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալն, ընթացիկ գներով, կազմել է 98.7 մլրդ.դրամ, որը 2001թ. հունվար-հուլիսի նույն ցուցանիշի նկատմամբ համարելի գներով աճել է 9.8%-ով:

Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 1219.7 մլն. դրամ, որը 2001թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համարելի գներով, աճել է 11.0%-ով: 2002թ. հունվար-հուլիսին 2001թ. հունվար-հուլիսի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.9% հավելած, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (4.7%), կենցաղային ծառայությունների (1.1%), փոստային և հեռահաղորդակցության (7.5%), կրթության (4.9%), մշակույթի (12.4%), զբոսաշրջության և էքսկուրսային (5.7%) ծառայությունների սակագների հավելածով: Նվազել են բժշկական սպասարկման և առողջարանների ու հանգստյան տների ծառայությունների սակագները(համապատասխանաբար՝ 4.2 և 1.7%-ով):

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2002թ. հունվար-հուլիսին (% ընդհանուրի նկատմամբ)



2002թ. հունվար-հուլիսին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում գերակշռել են նարդատար տրանսպորտի և բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունները, համապատասխանաբար՝ 39.0 և 23.4%:

2002թ. հունվար-հուլիսին խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով, ծառայությունների ծավալը կազմել է 824.5 մլն.դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.8%, իսկ բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 33.7 մլն դրամ: